

**ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ
ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ ԵՐՐՈՐԴ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ
(ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ 90-ՕՐՅԱ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ)
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱՔԱԹՎԱ ԵՎ/ՎԱՄ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ
ՍԱՅՄԱՆԱՓՎԿՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

(ADDRESSEE)

Վարչաշրջան՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____

Մատակարարողի անունը՝ _____

IHSS գրասենյակի հասցեն՝ _____

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) մատակարարողին

Այս ծանուցման ամսաթվից քսան (20) օր հետո դուք այլևս իրավասու չեք լինի IHSS ծրագրի վճարումներ ստանալ հաստատված ծառայություններ տրամադրելու համար ձեր ներկա ստացող(ներ)ին կամ որևէ այլ անձին 90 օրվա ընթացքում:

_____ սպասարկման ամսում դուք երրորդ անգամ խախտել եք
ԱՄԻՍ

աշխատանքային շաբաթվա և ճամփորդության ժամանակի սահմանափակումները՝
անելով հետևյալից մեկը կամ ավելին.

- Աշխատել եք 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ստացողի համար՝ առանց վարչաշրջանի հավանության, երբ այդ ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ:
- Աշխատել եք ստացողի առավելագույն շաբաթական ժամերից ավել՝ առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով դուք ավելի շատ արտաժամյա աշխատանք եք կատարել ամսվա ընթացքում, քան սովորաբար կանեիք:
- Աշխատել եք ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, երբ դուք աշխատում եք մեկից ավել ստացողների համար:
- Հայցել եք յոթ (7) ժամը գերազանցող ճամփորդության ժամանակ մեկ աշխատանքային շաբաթում:

Եթե համաձայն չեք այս որոշմանը, կարող եք ներկայացնել կցված վարչաշրջանի հայցի ձևը IHSS գրասենյակ վերոնշյալ հասցեով: Դուք ունեք տաս (10) օրացուցային օր այս ծանուցման ամսաթվից հետո, որպեսզի վարչաշրջանից վերանայում խնդրեք: Վարչաշրջանն ունի տաս (10) աշխատանքային օր վերանայման և ուսումնասիրության համար, որպեսզի որոշի՝ արդյոք չեղարկել խախտումը, թե ոչ: